

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի  
երաշխավորությամբ՝ Նունե Ռոմեոյի Աթանասյանի՝ 14.3.2025 թ.,  
ընդունվել է տպագրության՝ 20.3.2025 թ.,  
ներկայացրել է հեղինակը՝ 2.12.2024 թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԴԱՐԱՆԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### Ամփոփում

Հոդվածը նվիրված է մատենագիտությանը և այդ աշխատանքներին, դրանց կազմակերպմանը: Հեղինակի կողմից «ԵՊԿ հրատարակչությունը» հրատարակել է հեղինակի աշխատությունը 2025 թ. լույս է տեսել նույն վերատառնությամբ, ինչպես նաև համապատասխան բովանդակությամբ, որ ներկայացվում է հոդվածում: Հոդվածում նաև հիմնավորում է գործիքադարան տերմինի տեղիական կողմից շրջանառության մեջ դնելով իր բազմաթիվ աշխատություններում և մեր ամսագրի, հոդվածագիր-հեղինակի այլ հրատարակություններում:

**Բանալի բառեր.** մատենագիտություն, գործիքադարան, Հայաստան, ժողովրդական արվեստ, Անահիտ Կիրակոսյան, ժողովրդական գործիքներ, պատմագրություն:

### Abstract

Musicologist-Folklorist, Associate Professor at Yerevan Komitas State Conservatory Anahit Artavazd Kirakosyan. - "Bibliography of the Folk Instrument Collection of Armenia".

The article is devoted to the organization of bibliography and the related scholarly work. The author's work titled "Bibliography of the Folk Instrument Collection of Armenia" was published by "YSC Publishing House" in 2025, with the same title. The article provides an overview of the publication's content and structure. It also substantiates the use of the term "instrument collection", which the author has introduced into academic circulation through her works, including articles published in this journal and elsewhere.

**Key Words:** bibliography, instrument collection, Armenia, folk art, Anahit Kirakosyan, folk instruments, historiography.

### Абстракт

Музыковед-фольклорист, доцент Ереванской государственной консерватории им. Комитаса Анаит Артаваздовна Киракосян. - "Библиография армянского народного инструментария".

Статья посвящена составлению и организации библиографии армянского народного инструментария. Книга Анаит Киракосян "Библиография армянского народного инструментария" была опубликована «Издательством ЕГК» в 2025 году. Содержание книги представлено также в статье. В статье также обосновывается использование автором в своих работах и публикациях нашего журнала, а также в других источниках термина «инструментарий».

**Ключевые слова:** библиография, инструментарий, Армения, народное искусство, Анаит Киракосян, народные инструменты, историография.



# Մ ա տ Ե ն ա գ ի տ ու թ յ ու ն

կատարողներ, անսամբլներ, բնագավառի խնդիրներ և այլն): Օգտվել ենք նաև վերոհիշյալ մատենագիտության դասակարգման սկզբունքից:

Մեր կողմից հավաքված նյութերը հիմնականում սկսվում են 1991 թվականից հետո, թեև փնտրությունների արդյունքում գտել ենք նաև ավելի վաղ ժամանակների հրատարակություններ: Ընդհանուր առմամբ, նյութի հավաքագրումը, կոնկրետ մեր աշխատանքում, թվագրվում է 1836թ. և հատկապես 1892, 1895, 1898 թվականներից և շարունակվում մինչև մեր օրերը:

Հրատարակությունների հսկայական մասը տպագրվել է Հայաստանում (Երևան, Ալեքսանդրապոլ-Լենինական-Գյումրի, Ստեփանավան, Էջմիածին, Սպիտակ, Բջևան, Նոյեմբերյան և այլուր), իսկ Հայաստանից դուրս դրանց աշխարհագրական սահմանները տարածվում են դեպի Ռուսաստան (Մոսկվա, Լենինգրադ), Եվրոպա (Վենետիկ, Փարիզ, Լոնդոն), ԱՄՆ (Նյու-Յորք, Բոստոն, Լոս-Անջելես), Մերձավոր Արևելք (Կոստանդնուպոլիս, Կահիրե, Թավրիզ), Անդրկովկաս (Թիֆլիս, Բաքու), Արցախ (Շուշի, Ստեփանակերտ, Ասկերան, Մարտունու շրջան):

Հայաստանում տարածված ու սիրված երաժշտական նվագարանների և կատարողական արվեստի ուսումնասիրության բնագավառում հայ երաժշտագիտությունը բավական հաջողություններ է գրանցել: Թեև կոնկրետ գործիքագետ-մասնագետների պակասն ակնհայտ է, այնուամենայնիվ, բնագավառը բավականաչափ ուսումնասիրվել է և նույնիսկ տարբեր ճյուղերով:

Այսպես, ընդհանուր առմամբ և մասնավորապես բնագավառին անդրադարձել են երաժշտագետներ Կոմիտաս վարդապետը, Քրիստափոր Կուշնարյանը, Գարեգին Լևոնյանը, Մուշեղ Աղայանը, Ռուբեն Թերլեմեզյանը, Արամ Քոչարյանը, Ռոբերտ Աթայանը, Նիկողոս Թահմիզյանը, Աշոտ Պատմագրյանը, Մարգարիտ Բրուտյանը, Ալինա Փահլևանյանը, Լիլիթ Երնջակյանը, Անահիտ Բաղդասարյանը, Անահիտ Կիրակոսյանը, Սերգեյ Մարկոսյանը (Արցախ), Համիկ Ստեփանյան-Հարությունյանը, Մարգիս Հովհաննիսյանը, Նաիրի Խաչատրյանը, Գոհար Շագոյանը: Երաժշտագետներին միացել են կոմպոզիտորներ Գևորգ Արմենյանը, Արզաս Ոսկանյանը, հնագետներ Էմմա Խանգադյանը, Ֆելիքս Տեր-Մարտիրոսովը, էթնոերաժշտագետ-պատմաբան Հռիփսիմե Պիկիցյանը, երաժիշտ-կատարողներ Մաշա Օգանեզաշվիլին (Ալեքսանդր Օհանյան), Անահիտ Յիցիկյանը, Հովհաննես Դարբինյանը, Էդուարդ Բարսեղյանը, Դանիել Երաժիշտը, Մարգարիտ Ոսկանյանը, Անուշ Կիրակոսյանը, արվեստաբաններ Աստղիկ Գևորգյանը, Նազենի Դարիբյանը, արվեստաբան-երգիչ Հրանտ Խաչիկյանը, պատմաբան Արսեն Բորոխյանը, բանասեր

Տորք Դալալեանը, լեզվաբաններ Հրայր Աճառյանը, Ներսես Մկրտչյանը, Մարգիս Պետրոսյանը, լրագրողներ Գամո Մկրտչյանը, Հրայր Մաթևոսյանը և այլոք:

Վերոնշյալ մասնագետների աշխատասիրություններն ու տեղեկատվական նյութերը հրատարակվել են գրքերի ու բառարանների տեսքով, գիտական ամսագրերում, մամուլի էջերում, հանրագիտարաններում, մատենագիտության մեջ և այլուր: Գրվել են նաև թեկնածուական թեզեր և դիպլոմային աշխատանքներ:



Մեր աշխատանքում ընդգրկված նյութը բաշխված է հետևյալ բաժիններով՝ Գրքեր, գիտական հոդվածներ, թեզեր, բառարաններ, հանրագիտարանային նյութեր, մատենագիտական նյութեր, ամսագրային հոդվածներ, լրագրային հոդվածներ, լրագրային տեղեկատվություն, ավտոռեֆերատներ և դիպլոմային աշխատանքներ, ծրագրեր, ձեռնարկներ:

Հատուկ ուշադրության են արժանի Հայաստանում ապրող նվագարանագործ վարպետները, որոնց թիվը, ցավոք, գնալով նվազում է, սակայն նրանք արժանի են բարձր գնահատանքի, ինչպես նաև նրանց ծանր աշխատանքի լուսաբանմանը: Հենց նրանց շնորհիվ են ծնվում և ապրում ժողովրդական երաժշտական նվագարանները: Հուսով ենք, որ նրանք կունենան իրենց հետևորդ-աշակերտները՝ փոխանցելով իրենց վարպետությունը և պահպանելով այդ արհեստի մշակույթը հայոց ժողովրդական երաժշտական գործիքաշինության ասպարեզում:

Շատ կարևոր ենք համարում այս աշխատանքի հրատարակումը, քանի որ այն իր նախադեպը չունի:

Հրատարակման գործն սիրով հանձն է առել Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հրատարակչությունը՝ գլխավորությամբ Գոհար Կառլենի Շաղոյանի:

2.12.2024

թյան բնագավառում կիրառելու համար, թեև գործիքը որպես հոմանիշ նույնպես կարելի է օգտագործել ըստ անհրաժեշտության:

Ա. Մ. Մուքիսայան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան: Երևան, 1967 թ.

**Հեղինակի մասին տե՛ս էջ 17:**

**About the author, go to 17.**

**Об авторе, см.: стр. 17.**